# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղհամայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2020 թվականի N 66

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387 –Ն որոշմամբ,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի քաղվածքը, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված կիսակառույց բնակելի տունը չի գտնվում ՀՀ << Հողային օրենսգրքի >> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով սեփականության իրավունքի գրանցման թիվ 12042013-06-0004 վկայականը, քաղաքացի Ռ.Սարգսյանի դիմումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել քաղաքացի Ռուբիկ Սարգսյանի սեփականության իրավունքը Դսեղ համայնքի 06-035-0079-0026 ծածկագրով 0,16498 հա հողամասի նկատմամբ
2. Հողամասում առկա բնակելի տունը, բաց պատշգամբը և կաթսայատունը, որոնք կառուցվել են 2013 թվականին, սակայն բացակայում է կադաստրային քարտեզում, և սեփականության թիվ 12042013-06-0004 վկայականում, գրանցել գծանշված տարբերակով որպես ինքնակամ բնակելի տուն, բաց պատշգամբ և կաթսայատուն, որը կօրինականացվի ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման համաձայն, ավարտական փաստաթղթերի և վճարման անդորրագրերի առկայության դեպքում

3. Չբաղեցրած հողամասը ընդգրկված չէ ՀՀ <<Հողային օրենսգրքի >> 60–րդ հոդվածով սահմանված հողամասերում այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ
4. Վերը նշված հողամասին տրամադրել 52փ. 18 փոստային հասցեն:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով
6. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ Ռուբիկ Սարգսյանի դիմումը, անձնագրի պատճե, <<ԱԿԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2020թ. հուլիսի 17-ին
գ. Դսեղ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

### ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2020 թվականի N 67

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42, 43 հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով,

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Լոռու մարզի Դսեղ համայնքի սեփականատեր Սամվել Գոգինյանին պատկանող կադաստրային քարտեզի 06-035-0007-0002 ծածկագրում գտնվող 0,128 հա տնամերձ հողամասին և տանը տրամադրվել է 12 փողոց 16 տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

2020թ հուլիսի 17-ին
գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2020 թվականի N 68

## ՀԱՅԿԱԶ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՎԱՆՈՒՇ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հաշվի առնելով Վանուշ Աղաբեկյանի դիմումը Դսեղ համայնքի տարածքում Հայկազ Աղաբեկյանից, ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն սեփականության իրավունքով իրեն փոխանցված* 06-035-0026-0007 *ծածկագրով 0.2707 հա տնամերձ հողամասի և բնակելի տան,* 06-035-0115-0004 *ծածկագրով 0.2676 հա վարելահողի,* 06-035-0115-0055 *ծածկագրով 0.25363 հա վարելահողի,* 06-035-0124-0051 *ծածկագրով 0.4325 հա խոտհարքի,* 06-035-0151-0068 *ծածկագրով 0.01666 հա խոտհարքի, հողօգտագործման իրավունքները ձևակերպելու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և 2002թ. դեկտեմբերի 26-ի <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով*

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. *Վերականգնել Հայկազ Աղաբեկյանին, ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի տարածքում սեփականության իրավունքով պատկանող,* 06-035-0026-0007 *ծածկագրով 0.2707 հա տնամերձ հողամասի և ընդհանուր 133.76 մք մակերեսով բնակելի տան,* 06-035-0115-0004 *ծածկագրով 0.2676 հա վարելահողի,* 06-035-0115-0055 *ծածկագրով 0.25363 հա վարելահողի,* 06-035-0124-0051 *ծածկագրով 0.4325*

*հա խոտհարքի,* 06-035-0151-0068 *ծածկագրով 0.01666 հա խոտհարքի, հողհատկացման հիմքերը համածայն հատակագծերի և հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի կազմում և ժառանգության իրավունքի վկայագրի համածայն այն անցել է Վանուշ Աղաբեկյանին, ճանաչել Վանուշ Աղաբեկյանի սեփականության իրավունքը* 06-035-0026-0007 *ծածկագրով 0.2707 հա տնամերձ հողամասի և ընդհանուր 133.76 մք մակերեսով բնակելի տան,* 06-035-0115-0004 *ծածկագրով 0.2676 հա վարելահողի,* 06-035-0115-0055 *ծածկագրով 0.25363 հա վարելահողի,* 06-035-0124-0051 *ծածկագրով 0.4325 հա խոտհարքի,* 06-035-0151-0068 *ծածկագրով 0.01666 հա խոտհարքի, նկատմամբ:*

2.*Բնակելի տանը տրամադրել գ. Դսեղ 33-րդ փողոցի 3/2 տուն փոստային հասցեն:*

3.*Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ**

2020թ հուլիսի 17-ին
գ. Դսեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղիամայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2020 թվականի N 69

## ԱՍՔԱՆԱԶ ՍՏՅՈՊԱՅԻ ՉՈՓՈՒՐՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ասքանազ Ստյոպայի Չոփուրյանի դիմումը թոռների նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Դսեղի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի մարտի 13-ի որոշմամբ տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 1. կետ 1), հաշվի առնելով, որ երեխաների մայրը մահացել է, և նրանց հայրը տվել է համաձայնություն Ասքանազ Ստյոպայի Չոփուրյանին թոռների նկատմամբ խնամակալ նշանակելու մասին, նաև

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Լոռու մարզի Դսեղ համայնքի 30փ. 2տ. հասցեի բնակիչ բնակիչ Ասքանազ Ստյոպայի Չոփուրյանին նշանակել անչափահաս թոռների՝ Արման Մանվելի Մարգարյանի (ծնված՝ 12.04.2013թ.) և Նարեկ Մանվելի Մարգարյանի (ծնված՝ 18.10.2016թ.) նկատմամբ խնամակալ։
2. Ասքանազ Ստյոպայի Չոփուրյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու անչափահասների հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ անչափահասներին պահելու համար։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2020թ. հուլիսի 21-ին
գ. Դսեղ